ՆՈՐ ԿԱՆՈՆՆԵՐ ԿԱԼԻՖՈՐՆԻԱՅԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅԱՆ և ԵՐԵԽԱՅԻ ՀԱՄԱՐ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐՈՒՄ (CALWORKS) ԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ՑԱՆՑԻ ՀԱՄԱՐ և ՄԻԱՅՆ ԵՐԵԽԱՅԻՆ ՎԵՐԱԲԵՐՎՈՂ ՈՐՈՇ ԴԵՊՔԵՐՈՒՄ

Երեխայի օգնության կանոնները փոխվել են ձեր ընտանիքի համար: Դուք ստանում եք CalWORKs կանխիկ դրամական օգնություն ձեր երեխայի(ների) համար: Ձեզ կիրառելի փոփոխություններն են՝

- Ձեզանից այլևս չի պահանջվում «փոխանցել» ձեր երեխայի օգնության իրավունքները վարչաշրջանին, սակայն առկա են նպաստներ ձեր ու ձեր երեխայի(ների) համար՝ ունենալով երեխայի օգնության գործ Տեղային երեխայի օգնության գործակալության (Local Child Support Agency, LCSA) միջոցով:
- Ձեր դրամաշնորհի գումարը չի փոփոխվի, եթե չեք ցանկանում LCSA-ի երեխայի օգնության ծառայությունները, ներառյալ՝ գտնել ձեր երեխայի(ների) ոչ խնամակալ (բացակա) ծնողին կամ հայրություն հաստատել ձեր երեխայի(ների) համար:
  - Դուք պետք է տեղյակ լինեք, որ ոչ խնամակալ ծնողին գտնելը կամ հայրությունը հաստատելը կօգնի ձեզ ապագայում երեխայի օգնությունը գանձելու հարցում, եթե անհրաժեշտ է, և
  - Ապագայում, եթե դուք որակավորվեք կանխիկ դրամական օգնության համար, կարող են կիրառվել երեխայի օգնության այլ կանոններ:
- Դուք կպահպանեք այն ողջ գումարը, որը ձեզ տալիս է ոչ խնամակալ ծնողը կամ, որը LCSA-ը գանձում է ձեզ համար: Ձեզանից չի պահանջվում այն հանձնել վարչաշրջանին:
- Եթե դուք արդեն երեխայի օգնության բաց գործ ունեք LCSA-ի հետ, դուք ոչինչ չպետք է անեք, որպեսզի շարունակեք ստանալ ձեր երեխայի օգնության դրամը, որը գանձվում է ձեզ համար: Հետևեք ձեր ստացված երեխայի օգնության դրամին ու ստացման ամսաթվերին: Դա ձեզ անհրաժեշտ կլինի, որպեսզի վարչաշրջանին զեկուցեք ձեր ստացված երեխայի օգնության դրամի մասին:
- Եթե դուք երեխայի օգնության բաց գործ չունեք LCSA-ում, ապա դուք պետք է դիմեք LCSA երեխայի օգնության ծառայությունների համար, որպեսզի հաստատեք հայրությունը ձեր երեխայի համար, եթե անհրաժեշտ է, ու որպեսզի ձեր երեխայի օգնությունը գանձվի ու ձեզ ուղարկվի: Վարչաշրջանը կարող է օգնել ձեզ անել դա:
- LCSA-ի կողմից գանձված ու ձեզ ուղարկված երեխայի օգնությունն այլևս չի օգտագործվի հետ վճարելու համար ձեր ընտանիքին վճարված օժանդակությունը, այսպիսով չափահասի 48 ամսվա CalWORKs ժամանակն այլևս չի «չեզոքացնի» օժանդակության ամիսները:
- Երբ դուք ուղղակիորեն եք ստանում երեխայի օգնության դրամը, ապա այժմ դուք պետք է զեկուցեք երեխայի օգնությունը որպես եկամուտ, եթե եկամուտը զեկուցելու կանոնները ձեր դեպքում պահանջում են, որ դուք անեք դա:
- Եթե ստանում եք երեխայի օգնության եկամուտ CalWORKs ունեցող ձեր երեխայի(ների) համար, ապա մենք չենք հաշվում առաջին $50 ամեն ամիս: Մնացածը կարող է հաշվարկվել ձեր CalWORKs դրամաշնորհի դիմաց:
- Եթե դուք նաև ստանում եք CalFresh, ապա ձեր ստացված որևէ երեխայի օգնության եկամուտը կարող է օգտագործվել որոշելու համար ձեր CalFresh նպաստերի քանակը:

Եթե հարցեր ունեք, խնդրում ենք անմիջապես զանգահարել վարչաշրջան: